Յոյնք պնդէին թէ ունիմք հրաման և գիր վասն այնորիկ· Բդեշխն ասէր· զի եթէ գոցի այնպիսի գիր ինչ 1813 թուականէն զկնի, մնասցեն դրունքն որպէս և էինն, իսկ եթէ ոչ, քակեսցին եւ բարձցի նորաշինար որմն 'ի միջոյ· բայց զքակումն միայն բանիւ աւանդեաց և ոչ 'ի գիր արձանացոյց, որպէս զայլս : Ստեփանաքի Պէյն՝ որ ունկն դնէր վիճմանց երկուց ազգաց վասն հիւսիսային դրան՝ ասէ ցիւրան 'ի Յոյն բարբառ · զի՞ այդչափ վիճէք և յամառեալ կայք 'ի բանս ձեր · զի՞նչ օգուտ կամ վնաս հասանէ ձեզ 'ի դրանէդ յայդմանէ, յետս կացէք · իսկ նոքա դարձեալ հաստատուն կացեալ 'ի բանս իւրեանց, ասեն · Թափորին մերոյ է հարկաւոր : Փոխանորդն Հայոց՝ իրազեկ լեալ բանից նոցին ասէ · Յոյնք 'ի տարւոջ միանգամ ունին Թափոր · 'ի ժամուն՝ բացցուք՝ եւ կամ բնաւ ոչ փակեսցուք 'ի գիշերին յայնմիկ · զի Հայք եւս ունին Թափոր յաւուր տօնի Ծննդեան իւրեանց, որ երբեմն եղեալ 'ի հարաւային դրանէ Այրին, դառնային զառաջեաւ եկեղեցւոյն Յունաց, դուք ընդէ՞ր փակէք յայնմ գիշերի զայն դուռ · առ այս խոստացան բանալ զդուռն և չրջիլ Հայոց :

Յովհաննէս Եպիսկոպոս գրեալ ազդ առնէ զայսոսիկ յԵրուսաղէմ առ Զաքարիա Պատրիարք և պատուիրէ զգուշանալ յամենայնի · զի մի խարդախանօք և կամ հնարիւք ինչ յարմարեսցեն գիր 'ի ձեռն Բարտուղարի դատարանին վասն դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի : Իսկ Պաշտօնեայն արտաքին գործոց ոչ կարացեալ յայնժամ անձամբ անձին վճարել ինչ, և կամ լուծանել զխնդիրն, յղեաց յատեան արդարութեան · ընդ նմին և զայլ կարեւոր խնդիրս, զորոց պատմեսցուք յետոյ : Անդ 'ի քննութեան 'ի միտ առին՝ զի Հայք խնդրէին բանալ զբաժանորդութիւնն 'ի հիւսիսային դրանէ, եւ միայն սեփհականել ինքեանց · Յոյնք դժկամակեալ պատճառէին զարգելումն Թափորին : Եւ վասն արտաքին դրան Յոյնք պնդէին ըստ մտաց հրովարտակին ١٢١٨ թուին սեփհական ինքեանց, եւ ոչ կամէին լինել ընկերովի · Հայք ընդդէմ դարձեալ ասէին · զի որովհետեւ հրովարտակն Սէլիմայ Արքայի հին ընտրեալ, եւ զհրովարտակն զոր յառաջ բերեն Յոյնք, երիցագոյն է ժամանակաւ քան զհրովարտակն տուեալ զկնի մեծի դատին,